Վանաձոր համայնքի ղեկավարի

ժամանակավոր պաշտոնակատար

պրն. Արկադի Փելեշյանին

Հանրային Ռադիոյի լագրող

Լուսինե Սարգսյանից

Lusatu75@gmail.com

Հարգելի պրն. Փելեշյան,

ԵՄ «Դաշինք հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրի շրջանակներում Վանաձոր համայնքում նախատեսված էր պլաստիկ թափոնների վերամշակման արտադրամաս:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետևյալի վերաբերյալ:

1.Արդյո՞ք ԵՄ ծրագրով նախատեսված վերամշակման արտադրամասն արդեն կառուցվել և գործում է

2. Եթե այո, որտե՞ղ է տեղակայված, արդյոք նոր կառո՞ւյց է լինելու, թե՞ համայնքը տարածք է հատկացրել

3. Կոնկրետ այդ արտադրամասի համար որքա՞ն գումար է ներդրվել ԵՄ ծրագրով

4. Քանի՞ աշխատատեղ կբացվի արտադրամասում,

5. Ի՞նչ արտադրական հզորություն է ունենալու

6. Եթե նոր է կառուցվելու, արդյո՞ք հայտարարվել է նախագծային աշխատանքների ու շինարարի մրցույթ, ովքեր են հաղթել

7. Եթե դեռևս չկա արտադրամասը, ի՞նչն է պատճառը և երբ է նախատեսվում արտադրամասի գործարկումը

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Միաժամանակ, թեմայի շուրջ խնդրում եմ մեկնաբանություն համապատասխան պաշտոնյայից՝ հարցազրույցի տեսքով՝ հոդվածում ներառելու համար:

Կանխավ շնորհակալ եմ՝

Հարգանքով՝ Լուսինե Սարգսյան

03/31/25 թվական